ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «*ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԽԱՇՁԲ-22/04*»

ք.Վեդի «28»04 2022թ

«Վեդու համայնքապետարանը », ի դեմս համայնքի ղեկավար Գ.Սարգսյանի (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, Գ.Պապոյանը ՍՊԸ ի դեմս տնօրեն Գ.Պապոյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վեդի համայնքի՝ ք. Վեդի և Լուսառատ բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1800000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները

հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույնպայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վեդու համայնքապետարան	<<Գ. Պապոյան>> ՍՊԸ
Ք.Վեդի Թումանյան 6	Ք. Արարատ Ղուկասյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարություն	ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 900 422 102 229	ՀՀ220393330422000
ՀՎՀՀ 04100912	ՀՎՀՀ 04110175
Համայնքի ղեկավար Գ.Սարգսյան	Տնօրեն՝ Գ. Պապոյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
	L.S.

Հավելված N 1
« «28»04 2022թ կնքված
ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԽԱՇՁԲ-22/04 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ք. Վեդի և Լուսառատ բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
2	71241200		ՀՀ դրամ		1800.000		ՀՀ Արարատի մարզ ք. Վեդի	Պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ

Օբյեկտի անվանումը	*ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ ք. Վեդի և Լուսառատ բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում*
Օբյեկտի հասցեն և կառուցման տարեթիվը	*ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ ք. Վեդի և Լուսառատ բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում* *ք. Վեդի* Արարատյան փողոց 36 բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվել է 1980 թ-ին Արարատյան փողոց 38 բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվել է 1978 թ-ին Արարատյան փողոց 40 բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվել է 1976 թ-ին *Լուսառատ բնակավայր* *թիվ 1,2,3 4 և 5 բազմաբնակարան բնակելի շենքերը կառուցվել են 1978 թվականին*
Նպատակային նշանակությունը	***ք. Վեդի*** Արարատյան փողոց 36 բազմաբնակարան բնակելի շենք, բնակվում են *100 բնակիչներ* Արարատյան փողոց 38 բազմաբնակարան բնակելի շենք, բնակվում են *50 բնակիչներ* Արարատյան փողոց 40 բազմաբնակարան բնակելի շենք, բնակվում են *50 բնակիչներ* ***Լուսառատ բնակավայրի*** *թիվ 1,2,3 4 և 5 բազմաբնակարան բնակելի շենքեր, բնակվումեն 30 բնակիչներ*
Շենքի հատակագծային չափերը և ընդհանուր չափերը	***ք. Վեդի*** Արարատյան փողոց 36 բազմաբնակարան բնակելի շենք 61,1x12.05=736.25քմ Արարատյան փողոց 38 բազմաբնակարան բնակելի շենք 33.42x11.95= 420.86 քմ Արարատյան փողոց 40 բազմաբնակարան բնակելի շենք 36.0x11.61+1.7x13.3=440,6 քմ ***Լուսառատ բնակավայրի*** *թիվ 1* բազմաբնակարան բնակելի շենք 12,0x12.05=144,6քմ *թիվ 2* բազմաբնակարան բնակելի շենք 12,0x12.05=144,6քմ *թիվ 3* բազմաբնակարան բնակելի շենք 12,0x12.05=144,6քմ *թիվ 4* բազմաբնակարան բնակելի շենք 12,0x12.05=144,6քմ *թիվ 5* բազմաբնակարան բնակելի շենք 12,0x12.05=144,6քմ

Նախագծման փուլը , նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջները	Մեկ փուլ, աշխատանքային նախագիծ, համաձայն ՀՀՇՆ IV 11.05.02-99, ԳՕՍՏ 33100-2014, ԳՕՍՏ 21.511-83 և ՀՀ Կառավարության 23.06.2011թ թիվ 879-Ն որոշման հավելված 8 – Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգը: ՀՀ կառավարության 19.03.2015թ. ,ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասինե թիվ 596-Ն որոշում, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման, - ՀՀ ԿԱ ՔՊԿ նախագահի 05.04.2018թ թիվ 43-Ա հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ ՀՀՇՆ II-6.02-2006 թիվ 24-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի շինարարական նորմերի հաստատման մասին> N253-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունիսի 16-ի N 41-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 2-ի N 19-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N09-Ն հրաման, Հ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրաման ՀՀ կառավարության 04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ

Հետազննման և նախագծի նկատմամբ պահանջները	Չափագրական հետազոտություն ԳՕՍՏ 32868-2014 ***ք. Վեդի*** Արարատյան փողոց 36 բազմաբնակարան բնակելի շենքի, Արարատյան փողոց 38 բազմաբնակարան բնակելի շենքի և Արարատյան փողոց 40 բազմաբնակարան բնակելի շենքի վիճակի ուսումնասիրություն, եզրակացություն, հանույթ և չափագրություններ: ***Լուսառատ բնակավայրի*** *թիվ 1* բազմաբնակարան բնակելի շենքի, *թիվ 2* բազմաբնակարան բնակելի շենքի, *թիվ 3* բազմաբնակարան բնակելի շենքի, *թիվ 4* բազմաբնակարան բնակելի շենքի և *թիվ 5* բազմաբնակարան բնակելի շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, եզրակացություն, հանույթ և չափագրություններ **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** - ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) - շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացությունները - նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), չափագրություններ, Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը: Ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցային գրաֆիկը (ժամանակացույցը) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները: Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և

	մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: Մրցութային ծավալաթերթ՝նույն ծավալաթերթ-նախահաշիվը առանց տողերի միավոր արժեքների, նշելով միայն յուրաքանչյուր գլխի կշիռը (%) ծավալաթերթին կատմամբ:
Անհրաժեշտ փորձաքննություն	Պարզ փորձաքննություն

Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը

Նախատեսվում է նաև նորոգել *ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ ք. Վեդի և Լուսառատ բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքները* /2320,7քմ/ :

ք. Վեդի

Արարատյան փողոց 36 բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվել է 1980 թ-ին, 61,1x12.05=736.25քմ, 5 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

Արարատյան փողոց 38 բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվել է 1978 թ-ին, 33.42x11.95= 420.86 քմ, 5 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

Արարատյան փողոց 40 բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվել է 1976 թ-ին, 36.0x11.61+1.7x13.3=440,6 քմ, 5 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

Լուսառատ բնակավայրի
թիվ 1,2,3 4 և 5 բազմաբնակարան բնակելի շենքը կառուցվել է 1978 թվականին

թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքը 12,0x12.05=144,6քմ, 2 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

թիվ 2 բազմաբնակարան բնակելի շենքը 12,0x12.05=144,6քմ, 2 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

թիվ 3 բազմաբնակարան բնակելի շենքը 12,0x12.05=144,6քմ, 2 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

թիվ 4 բազմաբնակարան բնակելի շենքը 12,0x12.05=144,6քմ, 2 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

թիվ 5 բազմաբնակարան բնակելի շենքը 12,0x12.05=144,6քմ, 2 հարկանի: Տանիքը կառուցված է քառալանջ, ծածկը իրականացված է ազբոշիֆրերով: Տանիքի կրող կոնստրուկցիաները փայտից են:

Տանիքների վերանորոգման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1.Քանդման աշխատանքներ /քանդված շին. նյութերը ամբողջությամբ հանձնել համայնքապետարանի կոմունալ ծառայությանը/
2. Տանիքի փայտե /նոր/ կոնստրուկցիաների իրականացում
3. Տանիքի ծածկի իրականացում ցինկապատ ալիքավոր թիթեղով
4. Ջրհորդանների իրականացում

Նախագծի կազմը	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր 1. Ընդհանուր բացատրագիր 2. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) 3. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 4. Շինարարության կազմակերպման նախագիծ 5. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ 6. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ Համաձայնեցումներ Նախագծի համաձայնեցում 1.Համայնքի ղեկավարի
Այլ պահանջներ	1. Նախագծողի կողմից գոյություն ունեցող շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության, եզրակացության ձեռքբերում և

	նախագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում ***<u>Փորձաքննություններ</u>*** Քաղաքաշինական (պարզ) փորձաքննության, եզրակացության ձեռքբերում՝ պատվիրատուի կողմից, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշիվ/ ամբողջական փաթեթի ներկայացում 3 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափով)և ռուսերեն լեզվով: Նախագծային ամբողջ փաթեթը պետք է պատրաստվի **հայերեն և ռուսերեն** լեզվով: ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ) Կատարողը ավարտված նախագծերի փաթեթները էլեկտրոնային եղանակով պատվիրատուին պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ քան 10 օրացուցային օր հետո: Պատվիրատուն 2 օրացուցային օրվա ընթացքում պետք է ներկայացնի իր դիտողությունները, որից հետո կատարողը պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխությունները և ամբողջությամբ ավարտական տեսքով նախագծանախահաշվային փաթեթները հանձնել պատվիրատուին/էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ քան 2 օրացուցային օր հետո՝ առանց ֆինանսական փոխհատուցման: Աշխատանքների վճարումը իրականացնել դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229
ՀՎՀՀ 04100912

Համայնքի ղեկավար Գ.Սարգսյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Գ. Պապոյան>> ՍՊԸ

Ք. Արարատ Ղուկասյան 5

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

ՀՀ220393330422000

ՀՎՀՀ 04110175

Տնօրեն Գ.Պապոյան

(ստորագրություն)

Հավելված N 2
« «28»04 2022թ կնքված
ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԽԱՇՁԲ-22/04 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
71241200	նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ		...%	...%	...%	...%	%	...%	...%	...%	...%	...%	...%	...%	%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229
ՀՎՀՀ 04100912

Համայնքի ղեկավար Գ.Սարգսյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Գ. Պապոյան>> ՍՊԸ
Ք. Արարատ Ղուկասյան 5
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ՀՀ220393330422000
ՀՎՀՀ 04110175
Տնօրեն՝ Գ.Պապոյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն